ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-23-Ո-47
2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՆՍՏԱՎԱՅՐԵՐԸ, ՆՍՏԱՎԱՅՐԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով, 26-րդ հոդվածի 3-րդ մասով, 32-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով և 94-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի դատարանների դատավորների նստավայրերը, նստավայրերի սպասարկման տարածքները փոփոխելու կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2018թ. հուլիսի 9
ք. Երևան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
բարձրագույն դատական խորհրդի
2018թ. հուլիսի 9-ի թիվ ԲԴԽ-23-Ո-47
որոշման

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՆՍՏԱՎԱՅՐԵՐԸ, ՆՍՏԱՎԱՅՐԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ

Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհուրդն (այսուհետ՝ Խորհուրդ) արձանագրում է, որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով (այսուհետ՝ Օրենսգիրք) սահմանված իրավական նորմերի կենսագործման նպատակով որոշում կայացնելիս առաջնորդվում է բնակչության համար արդարադատությունն առավել մատչելի դարձնելու, դատավորների թվաքանակից ելնելով՝ դատական տարածքների օպտիմալացման, դատավորների միջև դատական գործերի բաշխման և վերաբաշխման գործընթացում սուբյեկտիվ գործոնի, այդ թվում՝ դատարանի նախագահի միջամտության բացառման, ինչպես նաև բացառիկ դեպքերում Խորհրդի կողմից օրենքով սահմանված կարգով միջամտության երաշխավորման չափանիշներով:

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Հիմք ընդունելով այն, որ Օրենսգրքի 22-րդ հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքը համապատասխանաբար Երևան քաղաքի, մարզի կամ մարզերի տարածքն է, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանն ունի կենտրոնական և այլ նստավայրեր, իսկ Օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ մասնագիտացված դատարանների դատական տարածքը Հայաստանի Հանրապետության տարածքն է, մասնագիտացված դատարանների կենտրոնական նստավայրերը գտնվում են Երևան քաղաքում, մասնագիտացված դատարաններն ունեն նստավայրեր մարզերում՝ Խորհուրդն ուսումնասիրում է համապատասխան առաջին ատյանի դատարանի նախագահի առաջարկությունը և կայացնում է որոշում դատարանի նստավայրերը և նստավայրի սպասարկման տարածքները փոփոխելու մասին՝ ղեկավարվելով սույն կարգով:

II. ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՆՍՏԱՎԱՅՐԵՐԸ, ՆՍՏԱՎԱՅՐԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԴԻՄՈՒՄՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

2.1. Առաջին ատյանի դատարաններում նստավայրերի և (կամ) սպասարկման տարածքների, իսկ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դեպքում՝ դատարանի նստավայրերի փոփոխության վերաբերյալ առաջարկությունները՝ դատարանի նախագահի կողմից համապատասխան գրությամբ ներկայացվում են Խորհրդին:

Դատարանի նախագահի կողմից ներկայացված առաջարկություններին կցվում են նստավայրերի և (կամ) նստավայրերի սպասարկման տարածքների փոփոխություն կատարելու, մասնավորապես՝ դատարանի նոր նստավայր սահմանելու, Խորհրդի կողմից սահմանված նստավայրը վերացնելու, նստավայրի սպասարկման տարածքում նոր հասցեներ ներառելու կամ հանելու վերաբերյալ անհրաժեշտ հիմնավորումներ:

2.2. Առաջին ատյանի դատարանում նշանակված, այլ դատարանից տեղափոխված, Խորհրդի որոշմամբ մեկ այլ առաջին ատյանի դատարանից գործուղված դատավորի նստավայրը Խորհրդի կողմից որոշվում է դատարանի նախագահի առաջարկության հիման վրա՝ հիմք ընդունելով դատավորի մասնագիտացումը, համապատասխան առաջին ատյանի դատարանի համար սահմանված նստավայրերում թափուր տեղերի առկայությունը, ինչպես նաև նստավայրերի սպասարկման տարածքների փաստացի ծանրաբեռնվածությունը:

2.3. Առաջին ատյանի դատարանում նշանակված, մեկ այլ դատարանից տեղափոխված, Խորհրդի որոշմամբ գործուղված դատավորն իրավունք ունի բացառիկ հիմքերի առկայության դեպքում տվյալ դատարանի մեկ այլ նստավայր տեղափոխվելու մասին պատճառաբանված դիմում ներկայացնել Խորհրդին:

Խորհրդին հասցեագրված դատավորի դիմումը պետք է տեղեկություններ բովանդակի տվյալ դատարանի այլ նստավայր տեղափոխվելու վերաբերյալ բացառիկ հիմքերի, մասնավորապես՝ պաշտոնավարմանը խոչընդոտող ընտանեկան, անձնական բնույթի հանգամանքների առկայության մասին՝ հնարավորության դեպքում կցելով նաև վերոհիշյալ հանգամանքները հավաստող համապատասխան փաստաթղթեր: Դիմումին պետք է կցվի նաև դատավորի այլ նստավայր տեղափոխվելու հարցի վերաբերյալ համապատասխան դատարանի նախագահի եզրակացությունը:

2.4. Առաջին ատյանի դատարանի երկու տարբեր նստավայրերի՝ նույն մասնագիտացում ունեցող դատավորներն իրավունք ունեն դիմելու Խորհրդին՝ խնդրելով կատարել իրենց նստավայրերի փոխանակում:

Դիմում ներկայացնող դատավորները պետք է պատճառաբանեն իրենց դիմումը: Դիմումում պետք է շարադրվեն համապատասխան դատավորների նստավայրերի փոխանակման հիմնավոր պատճառները: Դիմումին պետք է կցվի նաև դատավորների նստավայրերի փոխանակման հարցի վերաբերյալ համապատասխան դատարանի նախագահի եզրակացությունը:

2.5. Բացառիկ դեպքերում Խորհուրդը, ելնելով արդարադատության մատչելիությունն ապահովելու, դատական տարածքների օպտիմալացման հրատապ անհրաժեշտությունից, կարող է քննարկել առաջին ատյանի դատարանի նախագահի կողմից դատավորի նստավայրի փոփոխության վերաբերյալ ներկայացված առաջարկությունը նաև դատավորի անհամաձայնության (համաձայնության բացակայության) դեպքում:

Սույն կետով նախատեսված դեպքերում դատարանի նախագահը Խորհրդին ներկայացված առաջարկությամբ պետք է հիմնավորի դատավորի անհամաձայնության (համաձայնության բացակայության) պայմաններում վերջինիս նստավայրի հրատապ փոփոխություն կատարելու անհրաժեշտությունը:

III. ԽՈՐՀՐԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

3.1. Սույն կարգի 2-րդ բաժնով սահմանված առաջարկությունները և դիմումները Խորհրդի նիստի օրակարգում ընդգրկվում, քննարկվում և դրանց վերաբերյալ Խորհուրդը որոշումներ է կայացնում իր աշխատակարգով և սույն որոշմամբ սահմանված կարգով:

3.2. Խորհրդի նախագահի հանձնարարությամբ Դատական դեպարտամենտը սույն կարգի 2-րդ բաժնով նախատեսված առաջարկությունների և դիմումների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր է տրամադրում Խորհրդին:

3.3. Սույն կարգի 2.3-րդ և 2.4-րդ կետերով նախատեսված դատարանի նախագահի եզրակացությունը խորհրդատվական բնույթ է կրում:

3.4. Սույն կարգի 2.3-րդ, 2.4-րդ և 2.5-րդ կետերով նախատեսված դիմումները և առաջարկությունները քննարկելիս Խորհուրդն անհրաժեշտության դեպքում դատավորին (դատավորներին) և դատարանի նախագահին հրավիրում է զրույցի: Դատավորին այլ նստավայր տեղափոխելու և դատավորների նստավայրերի փոխանակման հարցերի վերաբերյալ Խորհուրդն անցկացնում է գաղտնի քվեարկություն: